Ընթերցանության թեստ
Նոր եկած երեխաներ

Traduction faite par : Prof. Ms Zemfira Avetisyan, National Institute of Education, EREVAN

1- Ուշադիր կարդա այս փոքրիկ պատմությունները և նկարիր դրանք :

a) Նկարի՛ր մի տղա, որն ունի կանաչ տաբատ, կապույտ վերարկու և դեղին կոշիկներ: Նա խաղում է ֆուտբոլ կարմիր գնդակով:

b) Նկարի՛ր մի հրեշ, որն ունի չորս դեղին աչքեր, երեք կապույտ բերան, վեց սրածայր կանաչ ականջներ և մի մեծ կարմիր քիթ Նա ունի չորս մազոտ ձեռք և միայն մեկ ոտք: Նա իսկապես սարսափելի է !

c) Նկարի՛ր մի կապույտ ավտոմեքենա:Կապույտ ավտոմեքենայի դիմաց կա մի կարմիր հեծանիվ:Կապույտ ավտոմեքենայի ետևում կա մի դեղին բեռնատար:

2- Ուշադիր կարդա՛ այս տեքստը :

Մայիսյան մի գեղեցիկ առավոտ երկու խխունջ որոշում են վազել:
՝՝ Գնում ենք մինչև հազարաթերթը և վերադառնում ենք՝՝,ասում է Հեկտորը՝ մոխրագույն խխունջը:
՝՝Համաձայն եմ,- ասում է Նեստորը՝ սպիտակ խխունջը,-գնանք այնտեղ:
Մեր երկու բարեկամները դանդաղ նետվում են առաջ: Ժամերն անցնում են: Գիշերը գալիս է:
Ո՞վ հաղթեց վազքում:
Ոչ ոք: Նրանք երկուսն էլ քնեցին հազարաթերթերի մեջ:

Կարդա՛ հարցերը և և շրջանագծի մեջ առ ճիշտ պատասխանը.

a) Ինչ գույնի է Նեստորը:

1- Նա շագանակագույն է:
2- Նա մոխրագույն է:
3- Նա սպիտակ է:
4- Նա կանաչ է:
5- Ես չգիտեմ:

b) Ի՞նչ են ուզում անել երկու խխունջները:

1- Նրանք ուզում են ուտել սալաթը:
2- Նրանք ուզում են լվացվել:
3- Նրանք ուզում են վազել:
4- Նրանք ուզում են տեսնել ընկերներին:
5- Ես չգիտեմ:

c) Ո՞վ հաղթեց վազքում:

1- Նեստորը:
2- Հեկտորը:
3- Երկուսից ոչ մեկը:
4- Երկուսն էլ:
5- Ես չգիտեմ:

d) Ընտրիր մի վերնագիր այս պատմության համար.

1- Մի հիվանդ խխունջ:
2- Շունը և խխունջը:
3- Խխունջների վազքը:
4- Կախարդական հազարաթերթը:
5- Ես չգիտեմ:

3- Ուշադիր կարդա այս տեքստը.

Նրա ծննդյան օրը եղավ ամենաերջանիկ օրը նրա ծնողների կյանքում:
<<Նա կատարյալ է,- ասում է նրա մայրը:
-Բացառակապես>>,-ասում է նրա հայրը:
Եվ նա այդպիսին էր:
Նա բացարձակապես կատարյալ էր:
<<Նրա անունը պետք է լինի ինչպես ինքը>>,- ասում է նրա մայրը:
-<<Նրա անունը պետք է լինի բացարձակապես կատարյալ>>,-ասում է նրա մայրը
Եվ դա այդպես էր:
Քրիզանթեմ:
Նրա ծնողները նրան անվանեցին Քրիզանթեմ:
Քրիզանթեմը մեծացավ, մեծացավ, մեծացավ:
Եվ երբ նա այն տարիքին հասավ,որ կարողացավ գնահատել իր անունը, Քրիզանթեմն այն պաշտեց:
Նա սիրում էր այն լսել, երբ մայրը նրան արթնացնում էր:
Նա այն սիրում էր այն լսել, երբ հայրը նրան կանչում էր ճաշելու:
Եվ նա սիրում էր այն լսել, երբ շշնջում էր լոգարանի հայելու առջև
Քրիզանթեմ, Քրիզանթեմ, Քրիզանթեմ...
Քրիզանթեմը սիրում էր այն թանաքով գրված տեսնել ծրարի վրա:
Նա սիրում էր այն շաքարով գրված տեսնել իր ծննդյան տարեդարձի տորթի վրա:
Քրիզանթեմ. Քրիզանթեմ. Քրիզանթեմ. Քրիզանթեմ: Քրիզանթեմը գտնում էր, որ իր անունը բացարձակապես կատարյալ էր:
Հետո նա սկսեց դպրոց գնալ:

Extrait de Chrysanthème, Kevin Henkes, Gallimard, 1998

Կարդա՛ հարցերը և շրջանագծի մեջ ա՛ռ ճիշտ պատասխանը կամ պատասխանները.

a) Քանի՞ գործող անձ կա այս տեքստում:

1- մեկ
2- երկու
3- երեք
4- չորս
5- հինգ
6- Ես չգիտեմ:

b) Ո՞րը եղավ Քրիզանթեմի ծնողների կյանքի ամենաերջանիկ օրը:

1- Այն օրը Երբ Քրիզանթեմը գնաց դպրոց:
2- Իր ծննդյան օրը:
3- Այն օրը, երբ նա ծնվեց:
4- Այն օրը, երբ նա ամուսնացավ:
5- Այն օրը, երբ նա կարողացավ գրել իր անունը:
6- Ես չգիտեմ:

c) Այս պատմության մեջ կա երկու բան, որոնք կատարյալ են: Որո՞նք են:

1- Հայրն ու մայրը:
2- Փոքրիկ աղջիկն ու իր մայրը:
3- Փոքրիկ աղջիկն ու իր անունը:
4- Ծննդյան օրը և ծննդյան տարեդարձի օրը:
5- Ես չգիտեմ:

d) Այս պատմության մեջ Քրիզանթեմը սիրում էր տեսնել իր անունը, երբ այն գրված էր.

1- գրիչով
2- թանաքամատիտներով
3- թանաքով
4- շաքարով
5- նարնջագույն մատիտով
6- Ես չգիտեմ:

e) Հետևյալ նախադասություններից ընտրիր այս պատմության համար լավագույն շարունակությունը:

1- Նա սովորեց կարդալ, դարձավ լավ աշակերտուհի և ունեցավ շատ բարեկամներ:
2- Նա հանդիպեց մի կորած շան, նրան տարավ տուն և դարձավ նրա ընկերը:
3- Առաջին օրերին նա շատ հոգսեր ունեցավ իր անվան պատճառով:
4- Նա չկարողացավ գրել իր անունը և դարձավ վատ աշակերտուհի:
5- Ես չգիտեմ: